ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ГЮМРИЙСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ ИМ. М. НАЛБАНДЯНА
GYUMRI STATE PEDAGOGICAL INSTITUTE AFTER M. NALBANDYAN
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Բ
Выпуск Б
Issue B

2014 № 1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 93/94

Հ. Ե. Փանոսյան

ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
(հնագույն շրջանից մինչև XV դ.)

Բանալի բառեր՝ վարչաքաղաքական, գավառ, քաղաք, նախարարական, արքունի տիրույթ, իշխանություն, վարչական բաժանումներ, վարչատարածքային, ռազմաստրատեգիական:

Ключевые слова: административно-политическая, провинция, город, министерский, королевский домен, княжество, административное разделение, административно-территориальная, военно-стратегический.

Kaywords: administrative-political, province, city, ministerial, royal domain, principality, administrative divisions, administrative-territorial, military-strategic.

Աշխատանքում հայ պատմագիտական միտքը հպանցիկ է անդրադարձել Նախիջևան գավառի և քաղաքի պատմության ուսումնասիրվող ժամանակաշրջանի առանձին դրվագներին, և այդ ուսումնասիրություններն ամբողջությամբ պատմական ակնարկի բնույթ են կրում: Մեր խնդիրն է տպագիր աղբյուրների հաղորդած տեղեկությունների համակողմանի քննության և վերլուծության հիման վրա ներկայացնել ուսումնասիրվող ժամանակահատվածում Նախիջևանի վարչաքաղաքական և վարչատարածքային ձևափոխումները: Արժանահավատ և անհերքելի տեղեկություններով հավաստել, որ Նախիջևանի գավառն ու քաղաքը ուսումնասիրվող պատմաշրջանում վարչաքաղաքական և վարչատարածքային առումներով մաս են կազմել հայկական բոլոր թագավորություններին և պետական կազմավորումներին:

Այս հարցի արծարծումը մեր կողմից պայմանավորված էր հիմնականում աղրբեջանական «պատմագրության» այն բարբաջանքներով, թե իբր հայկական

պետականությունը այս տարածքում (Հարավային Կովկաս) ստեղծվել է արհեստականորեն՝ արտաքին ուժերի (ի նկատի ունի Ռուսական կայսրության) գործուն աջակցության շնորհիվ, իսկ նրա տարածքի անբաժանելի մաս հանդիսացող Նախիջևանի գավառը վարչաքաղաքական և վարչատարածքային առումներով մաս է կազմել «ադրբեջանական հնագույն պետական» կազմավորումներին:

Հոդվածը շարադրելիս մենք զուգահեռաբար խոսելու ենք և՛ «Աշխարհացոյց»-յան Նախճավան գավառի, և՛ Նախճավան քաղաքի մասին:

Նախիջևանը, ըստ «Աշխարհացոյց»-ի, Մեծ Հայքի Վասպուրական նահանգի 34-րդ գավառն էր՝ 1220 կմ քառ. տարածքով[4, էջ 7]: Նախիջևանի գավառը տեղագրվում էր Արաքս գետի միջին հոսանքում՝ նրա ձախ ափին:

Առաջին պատմական տեղեկությունները Նախիջևանի մասին տալիս են ուրարտական սեպագիր աղբյուրները: Խոսքը վերաբերում է Մենուա արքայի (Ք. ա. 810-786 թթ.) Օձասար լեռան լանջի ժայռերին թողած մի արձանագրությանը, որը հայտնաբերել է երկրաբան Վ. Ա. Իգումնովը 1988թ.: Այդ արձանագրության մեջ հաղորդվում է. «1.Խալդյան զորությամբ Իշպուինե Սարդուրորդին ասում է,- 2.Մինուա Իշպուինորդին Արծինե (քաղաքի) երկիրը գրավեց, Իշ (քաղաքի) [երկիրը] (գրավեց): 3.Արծիկումե (քաղաքի) երկիրը (գրավեց), Այանիանե (քաղաքի) երկիրը գրավեց, (մարդկանց) սպանեց, վտարեց: 4.Վերադարձին հիմնեց Խալդեի կոթողը Բուլուա-(լեռան)-վրա: Սահմանեց կարգ: 5.Առարկաններն այս Խալդեին թող-զոհաբերվեն՝ (մեկ) ցլիկ (թող-զոհաբերվի) Խալդե տիրոջն-իր բարձրյալ՝ Բուլուա-(լեռան)-վրա» [14, էջ 57-58]:

Նախիջևանի վերոհիշյալ արձանագրության տվյալներից պարզվում է, որ դեռևս Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալման օրոք ուրարտացիները իրենց արշավանքներից մեկի ընթացքում անցել են Արաքսի ձախ ափը, Արարատյան դաշտից հարավ-արևելք, Ջուղա քաղաքի մոտակայքում[11, էջ 210]:

Հայ մատենագիրներից ամենահին և վարչաքաղաքական տեսանկյունից խիստ արժեքավոր տեղեկությունը Նախիջևան գավառի մասին տալիս է Մովսես Խորենացին՝ ասելով, որ Ք.ա. VI դ. Երվանդյան Տիգրանը. «Իսկ զԱնոյշ զառաջին կինն Աշդահակայ աղջկունս՝ հանդերձ պատանեկօք և այլ բազում գերեօք, որչափ թէ աւելի քան զբեւր մի, բնակեցուցանէ յարևելեայ ուսոց մեծի լերինն՝ (Մեծ Մասիս) մինչև ի սահմանս Գողթանն, որ են Տամբատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, և որ այլք առ եզերբ գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախջաւանու. և զերիս աւանսն Խրամ և զՋուղայ և զԽոշակունիս: Իսկ ի մեւս կողմանէ գետոյն զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև

ցնոյն ինքն ամուրն Նախճաւանոյ»[18, էջ 84-85]: Պատմահոր հաղորդած վերոհիշյալ տեղեկությունից կարելի է ենթադրել, որ սկսած Ք.ա VI դ.՝ Նախիջևանի գավառը Հայոց արքունիքի արքունապատկան տիրույթ էր: Մովսես Խորենացու հաղորդած մեկ այլ տեղեկություն վկայում է, որ հին Հայաստանի ավագ նախարարական տների կազմում գտնվող Մարդպետունիների կալվածքները և իրավասությունները տարածված էին «յԱտրպատականէ մինչև ցՃուաշ և Նախճաւան»[18, էջ 105]: Պատմահոր հաղորդած այս տեղեկությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հին շրջանում Նախիջևանը չի մտել Մարդպետականի մեջ, այլ մեկ ուրիշ վարչական միավորի՝ Սյունիք աշխարհի մեջ[10, էջ 381-382]:

I դարում Հայոց արքունիքը Նախիջևանի գավառը անհայտ պատճառներով անջատել է Սյունիքից և մտցրել Մարդպետականի մեջ: Ինչպես նշում է Բ. Հարությունյանը. «Տրամաբանական է կարծել, թե նման վարչական փոփոխությունը նպատակ ուներ սահմանազատել արքունի տիրույթները Սյունյաց իշխանների ժառանգական տիրույթներից»[10, էջ 382]: Եվ քանի որ Մարդպետունիների նախարարական տունը, որն իշխում էր արքայական գանձերի և կանանոցի վրա[12, էջ 64], իր հերթին արքունապատկան տիրույթները վերահսկող մարմին էր, ուստի արքունիքը նպատակահարմար է գտել նրան կցել Նախիջևան գավառը: Ամենայն հավանականությամբ, մինչև Արշակունիների գահի անկումը՝ 428 թ., Նախիջևան քաղաքն ու գավառը՝ որպես արքունական տիրույթ, մնում են Մարդպետունիների իրավասության ներքո:

Արշակունիների անկումից հետո իրավականորեն վերանում է նաև Մարդպետունիների իշխանական տունը, իսկ նրանց պատկանող արքունական կալվածքները, այդ թվում՝ Նախիջևան գավառը՝ նույնանուն քաղաքով, անցնում է Արծրունիներին[21, էջ 319-320]: Նախիջևան քաղաքն ու գավառը վերջիններիս ժառանգական տիրույթներում մնացին ընդհուպ մինչև VIII դ. սկզբները, երբ պայմանավորված Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակով, այն անցավ արաբներին՝ դառնալով արաբ ոստիկանների տեղապահների նստավայրը:

Խալիֆայության ժամանակաշրջանում արաբ պատմագիրների ու աշխարհագիրների մեծ մասը Արմինիան բաժանում է չորս մասի: Ըստ այս վարչական բաժանման՝ Նախիջևանը (Նաշավան), Վասպուրականի (Բասֆուրաջան), Դվինի (Դաբիլ), Շիրակի (Սիրաջ), Տայքի (Թայր), Բագրևանդի (Բաղրավանդ) հետ միասին մտնում էր երրորդ Արմինիայի մեջ[13, էջ 16-17]: Այստեղ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Նախիջևանը հիշատակվում է Վասպուրականից անջատ, հանգամանք, որը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Նախիջևան քաղաքն իր համանուն գավառով դուրս էր բերվել Արծրունիների

ժառանգական տիրույթներից և դարձել էր արաբներին ենթակա վարչաքաղաքական միավոր: Այն արաբների տիրապետության տակ մնաց մինչև IXդ. կեսերը: Նախիջևանն իր դիրքով արաբներին հետաքրքրել է թե՛ որպես ռազմական, տնտեսական նշանակություն ունեցող գավառ և թե՛ որպես վարչաքաղաքական միավոր:

Դատելով IX դ. պատմիչ Թովմա Արծրունու[5, էջ 404] հաղորդած տեղեկություններից՝ 705 թ. Նախիջևանի ու Խրամի եկեղեցիներում հայ նախարարներին այրելուց հետո արաբ զորավար Կաշմը (Կասըմ) Նախիջևանն անջատել է Վասպուրականից, քանի որ այն արդեն դարձել էր Արմինիայի արաբ ոստիկանների տեղապահների նստավայր. «Եւ Մահմետի առեալ զհրամանն անիրաւ՝ հրամայէր Կասմոյ ումեմն, որ էր հրամանատար նորուն ի կողմանսն Նախճաւան քաղաքի»[16, էջ 32-33]: Թ. Հակոբյանը նշում է. «Այս դեպքերին հաջորդած դարերում Նախիջևանը հաստատուն կերպով չէր պատկանում Սյունյաց և Արծրունյաց սահմանակից նախարարական տներից որևէ մեկի, այլ կռվախնձոր էր հիշյալ իշխանական տների միջև»[8, էջ 35]: Մեր կարծիքով, դժվար թե նման հարվածից հետո ուժասպառ եղած վերոնշյալ նախարարական տները կարողանային ակտիվ պայքարի մեջ մտնել Նախիջևանին տիրելու համար:

Հավանական է կարծել, թե IX դ. կեսերին, արաբական տիրապետության թուլացմանը զուգընթաց, Սյունյաց գահերեց իշխանները, ընդարձակելով իրենց տիրույթները հարավ՝ մինչև Արաքս գետը, տիրանում են Նախիջևան գավառին ու քաղաքին, [22, էջ 183]: Այն, որ վերջիններս Սյունյաց իշխանների տիրույթներում էին, հաստատվում է Թովմա Արծրունու հետևյալ հաղորդումից, որի համաձայն՝ Վասպուրականի իշխան Դերենիկի մահից (886 թ.) հետո նրա երեք որդիները բաժանում են Վասպուրականը, և նրանցից ոչ մեկի տիրույթներում Նախիջևանը չի հիշատակվում. «...և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերիս մասունս տալով Աշոտի, որպէս ասացաք յառաջագոյն՝ զգահն նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճավանու»[5, էջ 374]:

Սակայն Նախճավան գավառն ու քաղաքը Սյունյաց իշխանների ձեռքում մնացին մինչև X դ. սկզբները: Ինչպես երևում է Շապուհ Բագրատունու «Պատմագրութիւն»-ից, Սմբատ I-ին թագավորը, ընդարձակելով Բագրատունիների տիրույթները, գրավում է Պարտավը, Սյունիքը, Նախիջևանը, Երնջակը, Վաղարշավանը, Բասենը, Ապահունիքը, Հարք և Տարոնը[15, էջ 50]:

Այսպիսով, Նախիջևան գավառն իր քաղաքով կրկին դառնում է արքունական տիրույթ, և դրանով էր բացատրվում Սմբատ I-ի՝ Նախիջևանը որոշ

ծառայությունների դիմաց մերթ Արծրունիներին, մերթ Սյունիներին նվիրելու հանգամանքը: Հենց այս ժամանակ է, որ Նախիջևան քաղաքի շուրջ մեծ հակասություն է առաջանում Սյունյաց և Արծրունյաց իշխանների միջև, որի առիթը 905թ.՝ Աշոտ Արծրունու մահից հետո, Սմբատ I թագավորի՝ Նախիջևանը որոշ ծառայությունների դիմաց Սյունյաց Սմբատ իշխանին նվիրելն էր:

Նախիջևան քաղաքն իր շրջակայքով երկար ժամանակ չմնաց Սյունյաց իշխանների ձեռքում, որովհետև Սմբատ I թագավորի սպանությունից հետո այն դարձավ Ատրպատականի ամիրա Յուսուֆի փոխանորդ Նսրրի նստավայրը[17, էջ 143]:

Փաստորեն Ատրպատականի տիրակալի արշավանքներից հետո Նախիջևանը վարչական և տարածքային առումով անջատվել էր Սյունիքից և անցել արաբներին, որտեղ կազմավորվել էր էմիրություն[20, էջ 125]:

Այսպիսով, Նախիջևանը հողի գերագույն սեփականության իրավունքով չի պատկանել հայ նախարարական տներից որևէ մեկի: Արքայական գահի կորստից հետո, եթե անգամ Նախիջևան քաղաքն իր գավառով անցնում էր Արծրունյաց կամ Սյունյաց իշխանական տներին, ապա շատ կարճ ժամանակով, քանի որ նրա վարչաքաղաքական և ռազմաստրատեգիական նշանակությունը այնքան մեծ էր, որ օտար նվաճողները այն պահում էին իրենց գերիշխանության ներքո:

X դ. 70-ական թթ. Հայոց շահնշահ Աշոտ III Ողորմածին հաջողվեց իր գերիշխանությունը հաստատել Նախիջևանում: Մեզ է հասել Աշոտ III Ողորմածի հրովարտակը Նախիջևանից ոչ հեռու գտնվող Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին կալվածքներ նվիրելու մասին, Խաչիկ կաթողիկոսի հաստատության գիրը Աշոտ III թագավորին՝ Նախավկայի վանքին նվիրած կալվածների վերաբերյալ և Աշոտ III-ի դուստր Հռիփսիմեի ընծայագիրը նույն վանքին. «ՆԻԵ (976 թ.) տումարիս արամեան...Անդառնալի և բարձր հրամանաւ մերու թէմ և վիճակ սահմանեցաք, զոր և սահմանեալ էր ի նախնեաց մերոց և ի սուրբ հայրապետէն մերոյ Տեառն Ներսիսէ թոռին մերոյ սուրբ Լուսաւորչին, նախ և առաջ հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախչուան…Ազատ և Գիրան, Ջուղայ և իւր վանք, Աստապատ և իւր վանք, Շամբ և իւր վանք, Ջաղաց տեղն և իւր վանք, Արարք և իւր վանք…»[1, էջ 2-11]: Ինչպես վկայում է այս փաստաթուղթը, 976թ. զորքով Մաղարդա Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքն է գալիս Աշոտ III Ողորմածը և վանքին է նվիրում Նախիջևանն ու ընդարձակ կալվածքներ շրջակա այլ գավառներից: Այս փաստը չի կարելի մեկնաբանել այլ կերպ, քան Դվինից հարավ ընկած Արաքսի հովիտը Բագրատունյաց թագավորությանը միացնելու

կամ նվազագույնը՝ նրա գերիշխանությանը ենթարկելու իրողություն[9, էջ 116]: Կարելի է ենթադրել, որ Նախիջևանը արքունական մյուս տիրույթների հետ 1045թ.՝ հայոց պետականության անկումից հետո, անցնում է Բյուզանդիայի գերիշխանության տակ:

Վարչաքաղաքական այս իրավիճակը բավական կարճ տևեց: 1063 թ. սելջուկյան սուլթան Ալփասլանը գրավում է Նախիջևան քաղաքը՝ այն դարձնելով իր նստավայրը: Սելջուկյան տիրապետության շրջանում այն վերածվում է կարևոր վարչաքաղաքական կենտրոնի, որտեղ կազմավորվում է ամիրայություն: Նախիջևանի ամիրի իշխանությունը տարածվում էր Հարավարևելյան Հայաստանի ու Ատրպատականի վրա[3, էջ 217-218]: Սելջուկյան տիրապետության շրջանը Նախիջևանում ավարտվում է XII դ. կեսերին, որից հետո քաղաքն ու գավառը անցնում են Ատրպատականի Ելտկուզյան Աթաբեկությանը՝ դառնալով նրա ռազմական ու վարչական կարևորագույն հենակետերից մեկը, և պատահական չէ այն իրողությունը, որ Ատրպատականում բարձր դիրքի հասած Ելիկում Օրբելյանը՝ որպես «այս կողմերի գործակալ և զորագլուխ», տիրույթներ ստացավ Նախիջևան քաղաքում ու նրա շրջակայքում: Վերջինս իր գավառով դարձավ Օրբելյան իշխանական տան ժառանգական տիրույթ ու նստոցը [17, էջ 8, 280-288]:

XII դ. վերջին ազատագրված Հյուսիսարևելյան Հայաստանը բաժանվեց Զաքարյանների միջև: Նախիջևան քաղաքը և նրա շրջակայքը բաժին ընկավ Իվանե աթաբեկին[6, էջ 154]: Նախիջևանը երկար ժամանակ չմնաց Զաքարյանների տիրույթներում: 1225 թ. Հայաստանի գավառները ծանր հարված ստացան Խորեզմի շահ Ջալալ ադ Դինից: Ի թիվս Հայաստանի այլ գավառների՝ ավերածության է ենթարկվում նաև Նախիջևանը[2, էջ 499]: Այնուհետև Ջալալ ադ Դինը հաստատվում է Ատրպատականում՝ Նախիջևան քաղաքը դարձնելով իր նստավայրը[19, էջ 52]: Վերջինս կարճ ժամանակով է մնում Ջալալ-ադ-Դինի ձեռքում: Քաղաքի բնակիչների խնդրանքով, դիմում են Խլաթում նստող Մալիք ալ-Աշրաֆի նաիբ (տեղակալ) Հաջիբ Հուսամ ալ-Դինին և քաղաքը հանձնում նրան. «Բանն այն է, որ Ջալալ-ադ-Դինի վերաբերմունքը վատ էր ժողովրդի նկատմամբ, և զորքն էլ կողոպտում էր»,-գրում է Իբն-ալ-Ասիրը[3, էջ 334]:

Վարչաքաղաքական այս ձևափոխումները պահպանվեցին մինչև 1236 թ., երբ մոնղոլները, նվաճելով ողջ Հյուսիսարևելյան Հայաստանը, կատարեցին նոր վարչական բաժանումներ: Նախիջևանը Վրաստանի և Հյուսիսարևելյան Հայաստանի հետ մտնում էր Գյուրջիստանի վիլայեթի մեջ, որի կենտրոնը Թիֆլիսն էր: Շուտով Հյուսիսարևելյան Հայաստանում կազմվեց չորրորդ թումանը, որը

Սյունիքի իշխանության հետ ընդգրկում էր նաև Նախիջևանը (Վասպուրական նահանգի Նախճավան և Գողթն գավառների տարածքը - *Հ. Փ.*): Սակայն Սյունիքը շուտով անջատվեց Գյուրջիստանի վիլայեթից՝ դառնալով մոնղոլական խաներին անմիջականորեն ենթակա թուման [7, էջ 356-358]: XIV դ. վերջերին Լենկ-Թեմուրի կատարած վարչատարածքային բաժանումով Նախիջևանը Հայաստանի ու Հարավային Ատրպատականի հետ կազմեց մեկ վարչական միավոր, որի կառավարիչը կոչվում էր Էմիրապետ: Վերջինիս նստավայրը Թավրիզ քաղաքն էր [7, էջ 358-361]: Լենկ-Թեմուրի ստեղծած պետությունը կարճատև կյանք ունեցավ: Նրա մահից հետո այդ ընդարձակ պետությունը շատ արագ քայքայվեց, իսկ Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատեցին կարա-կոյունլու և ակկոյունլու քոչվոր ցեղերը: XV դ. ընթացքում վերոհիշյալ քոչվոր ցեղերի տիրապետության շրջանում աստիճանաբար ձևավորվում է Թուման-ե Նախիջևան վարչական միավորը, որն ընդգրկում էր ավելի ընդարձակ տարածք, քան «Աշխարհացույց»-յան Նախճավան գավառը (Վասպուրական նահանգի Գողթն գավառը, ինչպես նաև Սյունիք նահանգի Ծղուկ, Ճահուկ, Երնջակ և Վայոց ձոր գավառները - *Հ. Փ.*):

Այսպիսով, Նախիջևանն իր վարչաքաղաքական բացառիկ նշանակությամբ մեծ դեր է խաղացել Հայոց պատմության ողջ ընթացքում, ինչպես անկախ պետականության, այնպես էլ նրա բացակայության պայմաններում: Այն հնագույն շրջանից եղել է Մեծ Հայքի՝ վարչաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող գավառներից մեկը, որը ուսումնասիրվող ժամանակահատվածում երբեք չկորցրեց իր վարչաքաղաքական նշանակությունը և որպես Մեծ Հայքի օրգանական մաս՝ հայ ժողովրդի հայրենիքի անքակտելի բաղադրիչներից մեկն է:

Г. Е. Паносян

Нахичевань в административно-политических разделениях
(с древнейших времен до XVв.)

В работе главным оброзом изучая и анализируя печатные источники дали общую картину политических и административных изменений Нахичевана исследуемого периода. На основе достоверной и убедительной информации можно подтверждать, что Нахичевань с точки зрения политических и административних аспектов была одной из неделимих частей всех царств и государственных образований Армении.

Эта проблема вызвана главным образом тем, что азербайджанские "историки" обычно говорят, что армянская государственность в этой области (Южный Кавказ) был создан искусственно при активной поддержке внешних сил (с помощью Российской империи), а Нахичеванская провинция, в политическом и административном аспекте является неотъемлемой частью её территории и была неделимой частью "древних азербайджанских государственных образований".

H.E. Panosyan

Nakhidjevan in Administrative-Political Divisions
(from Ancient Period to the XV Century)

The work is based on the investigation and analysis of the study period, Nakhchivan's political and administrative modifications, credible and compelling information to ensure that the political and administrative aspects of Nakhichevan to study the same period and made up of all the Armenian kingdoms and state formations.

This issue is caused mainly by Azeri "historians" of the claims of the Armenian state in this area (South Caucasus) was created artificially by external forces (by means of the Russian Empire), thanks to the active support of the province of Nakhichevan, which is an integral part of its territory, political and administrative aspects formed part of the "ancient Azerbaijani state" formations.

Գրականություն

1. Աբրահամյան Հ., Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, Եր., 1941, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 191 էջ:
2. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, ի Մխիթարայ Վանս, Ի Ս. Ղազար, 1893, 522էջ:
3. Արաբական աղբյուրներ, Իբն-ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 443 էջ:
4. Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 155 էջ:
5. Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1910, Աղանեանցի տպ., 529 էջ:

6. Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, Էլեքտրաշարժ Տպարան օր. Ն. Աղանեանցի Պօլից, 420 էջ:
7. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, «Միտք» հրատ., 508 էջ:
8. Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Եր., 1966, «Միտք» հրատ., 220 էջ:
9. Հայ ժողովրդի պատմություն, ակադ. հրատ., հ. Գ, Եր., 1976, 1031 էջ:
10. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Եր., 2001, ԵՊՀ հրատ., 403 էջ:
11. Հարությունյան Ն., Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Նախիջևանի սեպագրում, ՊԲՀ, 2000, N 2, էջ 196-212:
12. Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Եր., 1934,ԵՊՀ հրատ., 336 էջ:
13. Նալբանդյան Հ., Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Եր., 1965, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 258 էջ:
14. Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում,Գիտաժողովի նյութեր, Եր., 2001,«Նախիջևան» հրատ., 202 էջ:
15. Շապհոյ Բագրատունւոյ պատմագրութիւն, Էջմիածին, 1921, տպարան Մայր Աթոռ Սրբոյ Էջնիածնի, 96 էջ:
16. Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, 201 էջ:
17. Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն Տանն Սիսական, Մոսկ-վա, ի տպարանի ճեմարանի Արեւելեան Լեզուաց, 1861, 386 էջ:
18. Սրբոյ հորն մերոյ Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910, Աղանեանցի տպ., 430 էջ:
19. Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, Եր., 1936, Մելքոնյան ֆոնդի հրատ., 170 էջ:
20. ՈԻթմազյան Հ., Սյունիքը IX-X դդ., Եր., 1958, ԵՊՀ հրատ., 380 էջ:
21. Адонц Н. Армения в эпоху Юстиниана. Ер., 1971. Издательство Ереванского университета. 526 с.
22. Тер-Гевондян А. Армения и арабский халифат. Ер., 1977. Изд. АН АССР. 322 с.

Տեղեկություններ հեղինակի մասին
Փանոսյան Հրաչյա Երանի *- ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ,*
E-mail: hrach-84@list.ru

Տրվել է խմբագրություն 25. 08. 2015